

**14. Փաւստոս՝ զիւռամիկ պաշտօնազորկ ընող կապաղովկեան ժողովին նկարագրութեան մէջ յոյժ կարելոր ակնարկ մ'ալ ունի.** «Եղև, կ'ըսէ, ժողով եպիսկոպոսացն սինհոդոսին նահանգին կեսարու ատաց հայրապետին»։ Եւ «հայրապետով» ոչ եթէ Հայոց դէմ զայրացող և նոյն ժողովը կազմող ս. թարսեղը, որոյ բացակայութիւնն անտեղի կը լինէր, այլ Հայոց նորդնտիր կաթողիկոսը, որ չէր հրաւիրուած զինք դատապարտող ժողովին։ Կը հետէկի որ կեսարիոյ նահանգային ժողովներին սովորաբար անպական կը լինէր Հայոց հայրապետն ալ, որոյ համար այդ առթիւ իւր բացակայութիւնը նշմարեկի է զարձեր պատճէն։ Եւ որովհետեւ նահանգային ժողովին անդամները նոյն նահանգին վիճակաւորներն էին միայն, ինչպէս կը հաստատեն Փաւստոս և ընդհանուր տովորութիւնը, ուրեմն Հայոց կաթողիկոսն ալ՝ որ կը մասնակցէր անոնց, նոյն նահանգի առաջնորդաց դասուն կը պատկանէր, և չէր գլուխն անկախ վիճակի մը։

Զայս կը հաստատէ զարծեալ ս. թարսեղ մէկ նամակին մէջ՝ զրուած 372ին առ Դամասոս պապ և առ իսալիացի ու գաղիացի եպիսկոպոսունս, արիոսեան հերձուածոյն նարակման դէմ, որոյ մէջ իրեն հետ ձայնակից նշանակուած են երեսուն և մի եպիսկոպոսներ։ և ասոնց կարգին կը կարգանք նաև Խօսահետց (Յուռակ), Խօսօքոց (Խոսորվ) և Նարօտց (Ներսէս) անուններն այսպէս իրարու ցով, որոնց Հայազգի եպիսկոպոսներ են յայտնապէս, և մասնակցեր են այդ թղթին ինոցով գումարուած ժողովին։ Յիշեալ Ներսէս անկասկած մեր ծանօթ կաթողիկոսն է, և ինց միայն կրնայ լինելու որովհետև այդ անոնց մեր ցով Դ զարու մէջ միակն է, և չինց տեսներ ուրիշ ոչ մէկ աշխարհականի կամ եկեղեցականի վրայ։ Այսպէս

մեր սուրբ հայրապետն իւր եղերական մահուան տարւոյն մէջ իսկ վերջին անգամ կ'երթայ ի կեսարիա՝ իւր ստորացրութիւնը զնելու ս. թարսղի ձեռնազրին քով, Եւ ոչ միայն նուաստութիւն չի համարիր կախութն այդ եպիսկոպոսապետէն, — պէսք է զիտնալ թէ միջին կամ մեր դարուս չէր ապրեր նա, — այլ մասաւանդ հիացող մ'է Գամբաց այդ մեծ հովուապետին սրբութեան, իմաստութեան ու չընաղ վարչութեան, և անոր ի կապադովկիա հաստատած գեղեցիկ կարգեն ու բարեկարգութիւնը Հայաստանի մէջ ալ կը կրկնէ<sup>8</sup>, անտարակոյս անոր թելարդութեամբ իսկ, թէպէտու իւր մեծ հոգին կարօտ չլինէր թելարդութեանց։ Խորենացին նոյնպէս կը հաստատէ անոր ընդօրինակելն յունական բարեկարգութիւնը<sup>9</sup>։

(Եարայարելի)

Հ. Վ. Հանուն

## ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ԶԵՌԱԳԻՐՔ

### Ա. ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՉԻՒՆ

(Եար. տես Բազմ. 1926, էջ 67)

Այս թարգմանիչ Յոհաննէս վարդապետն կ. Պոլսեցին, մեր Մատենագրական պատմութեան մէջ «ՀԱՌՈՎ» անունով ճանշցուածն է, որու մասին զրած եմ երեմն («ՀԱՅԻՑՍ ԱՄՄՈՒԾԱՑ» 1893, էջ 369)։

Ծնած է այն 17րդ զարու կէսին, քաջական աւրոպական լեզուներու, երկարատեն ապրած է Վենետիկ, ուր թարգմանած է այս գործը, և յիսոյ Մարտիլիա և Ամսկերտամ ալ մալով՝ այն տեղերու նորակազմ հայ ձուլարաններու զարգացումն մեծապէս ջանապիր եղած է։

Բացի այս թարգմանութենէն, որ հրատարակուած չէ, ինցն ունի հրատարակած թարգմանութիւններ, որոնց վենետիկ և

1. Փաւս. 226. — 2. Նմ. 92. — 3. Հմմ. Գեւ. Փ. Բ. 118. — 4. Խորէն. Գ. բ.

Մարտիլիս տպագրուած և կը կրեն  
1670—1696 թուականները<sup>1</sup>:

\* \*

Այսպէս այս բազմարդին վարդապետը  
Ճօնի Պաթիսղա Փօռթայնօի թնազննորեան  
թարգմանութեամբը իրաւունք կ'ունենայ  
17րդ Դարու Հայ թժշկական Պատմու-  
թեան մէջ յիշուելու, որովհետեւ բաւական  
լաւ ու զիտական գործ մ'է այն:

Ձեռագիրս նոյն հեղինակին երկու աշ-  
խատութիւնը կը պարունակէ: Առաջինը  
թնազննորինը՝ որ 202րդ էջին վրայ կա-  
ւարտի, Երկրորդը՝ Ձեսնազննորինը, որ  
կը գրաւի մացած էջերը:

Թարգմանիչը հատորին սկիզբը իր կող-  
մէն գրած է՝ Հայ Վաճառականներուն  
ուղղուած ԱԶԴ մը, որ՝ « Ծրակ<sup>2</sup> տա Հայ-  
կացին Վաճառական » վերնագիրը կը կրէ  
և է հետեւեալը.

« Նորածին թնազննորինն իմ տա ձեզ  
« դիմէ, ով եղասոր իմ սիրեցեալը ի Քրիս-  
« տոս, որպէս զի ձեօր ձուացեալ սիրիցի  
« ի մէջ մերազնեաց, տա ի ունել զսկզի  
« պարծեանա, ի մէջ գրեանցն հայկազու-  
« նեաց: Քաեզի սրպէս ի յինչ տեաց,  
« այսպէս և ինչը ի տեար պարծին: Եւ  
« այս հախ՝ ի փառ մեծագոյն Աստուծոյ:  
« Երկրորդ, ի գուարձուրին և ի հրաւան  
« ձերուց: Եւ Երկրորդ ի վերաստացումն այ-  
« ց ցերուրեան վերմականի հայողին<sup>3</sup> իրուց  
« աղացաւ:

« Վասն որոյ ընկարտուր զատ սիրով,  
« և ի կիր արէկը բատ համոյից ձերոց,  
« եշմարէլով ուշիմասկէ զիրս շահաւու, և  
« զօդտակարս ձասեցեալը ի ամա: Քանզի  
« բատ իմում խոկնան զրազումն ձեզ երոց  
« և պիտոյ, և ի բազմաց ընդունելոց և  
« զշոր խոհներուրեան, որովհետեւ սորին է  
« զնենեմ, ոչ միայն զզանազան բարոց և  
« սովորուրեանց, ախտից և մոլորեանց

« մարդկան, և անասեոց, այլ և ընձեսեկն  
« զիեւոյ զավելոյ զնյինս, որը ամեներեան  
« իրավի պիտոյանան մարդկային կենցուղա-  
« վարուրեան, այսինքն ի յամուսնուրինս,  
« և ի յընկերակցուրինս, ի բարեկամու-  
« րինս, ի խորհրդակցուրինս և ի կատա-  
« վարուրինս անձին, նոզեկան և ի մար-  
« մականս, իսկ և ի խրամանս, և ի  
« զրուան համեստու և պարկէշտու ողջ լե-  
« րոց:

« Զի ձեր եմ ամենեցուն ծառայ

« ՑՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՐԴԱՊԵՏԵ ԿՈՍՏԱԽԵՎՈՒ-  
ՊՈԼՍԵԱՆ » :

\* \*

Ցովհաննէս կ. Պոլսեցի սոյն խրատա-  
կան տողերը գրելէ յետոյ, կ'արձանագրէ  
նաև առ սուրբ Գրիգոր Լուսաւորիչն ուղ-  
ղուած աղերասկան խօսքեր, որոնցմով  
կարողութիւն կը ինդրէ՝ որպէս զի յա-  
չողութեամբ ի զլուխ հանէ այս թարգ-  
մանանութիւնը, և ապա կը սկսի բուն գործը,  
որ նախ ունի փոքրիկ Յառաջարան մը և  
այլու տեղեկութիւն կու տայ, թէ թնազննո-  
րինը զիտուրին մ'է, որ թնական մկր-  
տունելերոց վրայ հիմնուած ըրբարպ, կ'ո-  
ւացանք՝ ձանձնայ մարդուն զանազան բար-  
երը, թէ շարէն փախչելու և թէ բարիին  
հաղորդակից գտնուելու համար, և բաց աստի՛  
կը սովորեցն հաւ անձին վատրարուրին-  
ները զիտեալ և նաև բուժել հիշանդարին-  
ները:

Ե' բաէ թէ հիները ունէին թնազննական  
17 տեսակ միջոց, որոնցմով իրեւ թէ  
ամէն բան կը գուշակէին և կը մարգա-  
րէանային. այս ճիւղերուն առաջինը կը  
կոչուէր՝ աստեղաբաշխուրին կամ աստե-  
ղամայութիւն, Երկրորդը՝ Հրազննուրին,  
Երրորդը՝ Օնազննուրին, չորրորդը՝ Ջրա-  
զննուրին, Հինգերորդը՝ Երկրազննուրին,  
վեցերորդը՝ Միազննուրին, եօթներորդը՝

1. «Պատ. Հայ Դպր.» Հ. Գ. Զարպ. Հայ. Բ. Էջ 299-315.

« Զամանա » Պատ. Հայու. Հայ. Գ. Էջ 662.

2. Թուագր, տեսութիւն.

3. Հայկաց = Հայերէնի թարգմանուց:

կոնքազնեուրին, ութերորդը՝ զիհարթեցու, րին կամ շրմախելուրին, ինսերորդը՝ արաղազմնեուրին, տասներորդը՝ ջեսնազնեուրին, տասնեմէնկերորդը՝ չառահարցուրին, տասնեներկուերորդը՝ վհկուրին, տասնեներեցերորդը՝ կացահարուրին, տասնեցուրորդը՝ ժանտարերուրին կամ փորուտափութին, տասնենինգերորդը՝ զառազմանեկունմ, տասնեմէնցերորդը՝ բարյականուրին, իսկ տասնեմօթներորդը՝ Դիազնենուրին:

Բայց այս բոլոր միջոցները, որոնք՝ դժբախտարար՝ հակառակ արդի զիտական յառաջակիմութիւններու, տակաւին են ի պատուի, կը ծաղրուի հեղինակին կողմէ, պարապ բաներ կ'ենթալցուին, և յետոյ ինքը զիտական եղանակաւ կը սկսի պարզել, թէ ինչպէս ճանշնալու է լաւ կամ գէշ կենդանին, լաւ կամ գէշ մարդը և անոր բնութիւնն ու յատկութիւնները:

Այդի Հոգերանական տուեալներու անհամաձայն չեն Ճօան Պաթիսագա Փոսթայնօի գծած վարդապետութիւնները, զորս երկար կ'ըլլար մի առ մի հոս մէջ բերել:

Բժշկութեան մէջ, մանաւանդ արդի Հոգերուժութեան մէջ, շատ յարգի են այս տեսակ զննութիւնները, և ջախտագէտներ չատ ուշադիր են այսօր դիմազնական, դիմագծական, դիմագիտական միջոցներու:

\*  
\* \*

Ամրող գործը Զորս Գիրքի է բաժնուած, և գրուած խիստ հետաքրքրական կերպով: Առաջինին մէջ կը գրէ՝ թէ ինչպէս կարելի է մարդու և կենդանիի արտաքին շարժութեալներն են ձևերէն զուշակել անոնց ինչ տեսակ մարդ կամ կենդանի ըլլալը, երկրորդին մէջ՝ մարդուս զիլին ձևէն, մազերու գոյնէն, ճակատի, թիթի, աչքի, ականջի, և ուրիշ կողմերու ձևէն ու շարժուածքէն զիտանալ անոր ինչ տեսակ բնաւորութեան տէր ըլլալը: Երրորդին մէջ կը խօսի հոգերանական վիճակներու մասին, և չորրորդին մէջ ալ ցոյց կու տայ մարդու մը տգէտ, մոռացկոտ,

խելառ, մելամազգոտ, սիրահար, բղջաւ խոհ, ծոյլ, քնափ, քնցուզ, երկչոտ, անուժ, լիրը, գող և այլն ըլլալը ճանաշելու եղանակը, և միանգամայն՝ թէ ինչպէս և ինչ միջոցներով կարելի է բուժել զանոնց այս վիճակներէն, ու կը վերջացնէ:

Եատ հետաքրքրական են բոլոր գրուածները, որոնք եթէ արդի զիտութեան սկզբունքներուն հետ բաղդատութեան գրուկն՝ կրնան զտուիլ ու մարրուիլ, և ուսումնական նոր աշխատութեան մը ծնունդ տալ:

\* \* \*

Զեռազրին պարունակած Երկրորդ աշխատութիւնն է՝ Զեսնազմնութիւն, որ է ափին զիծերու միջոցաւ գուշակութիւններ ընկելու զիտութիւնը, երկար չեմ խօսիր այս մասին, Թովկետու սոյն նիմիթը պարունակող ձեռազդի մը վրայ գրած եմ արդէն ՅՈ տարի առաջ (տե՛ս «ՀԱՆԴԵՍԱՄՄՈՒՐԵԱ 1893 Մեպու. էջ 280-283»):

Այս անգամ սա ևեթ կը կրկնեմ, ինչպէս այն ատեն, թէ Զետագննութիւնը, որչափ որ հմայական բան մը համարուած է, պիտի կը նաև օր մը զիտական զննութեան իրը լրացուցիչ մաս համարուիլ, մանաւանդ օրինական բժշկութեան մէջ (Médecine Légalie): Թերևս օր մը Զեռնազննութիւնն ալ զտակար ճիւղ մը համարուի ախտազննութեան, երբ այսօր զիտենից թէ ձեռագրութեան մը կամ ստորագրութեան մը ձեւն ստորագրողին կամ ձեռագրողին բնաւորութիւնը կարելի է որոշել, եղողագններու ցննութեամբ թուրային հիւծախտի աստիճանը իմանալ, և մատնածայրի զիծերու կաղապարներէն՝ ոճրագործերու մասին լուսարանութիւններ հանել:

\* \* \*

Ս. Ղազարի վանցը գտնուած այս ձեռագիր Զեռնազննութիւնը դարձեալ Ճօան Պաթիսագա Փոսթայնօի գործն է և թարգմանիչն ալ նոյն այն Յովհաննէս Վարդապետ կ. Պոլսեցին:

ինչպէս արդէն յայտնեցի, Ս. Ղազար երկու օրինակ ունի յար Կ նման, օրինակ մ'ալ կը գտնուի կ. Պոլսոյ՝ իւսկիւտարի Ա. Խաչի վարժարանի Մատենադարանը, և հատ մ'ալ վիշնասի Մխիթարեանց վանքը («ՀԱՆԴԻԾ ԱՄՍՈՒԹԵԱ» 1898, էջ 283)։

Ա. Խաչի վարժարանին օրինակն է զոր ծանօթացուցած եմ ժամանակին. անկէ ամբողջ ընդօրինակութիւն մ'ըրած եմ. քովս ունիմ զայն, և բաղդասակով վկենակիւնան օրինակներուն հետ, կը տեսնեմ թէ բնաւ տարբերութիւն մը չի կայ անոնց միջն։

Վկենակիւնան Զեռագիրներուն առաջնը՝ զոր մեր պատումասիրութեան առարկայ ըրբնը՝ անցեալ զարու սկիզբը սեպհականութիւնն եղած է Սիրուն ՊԱՊԱ անուն Սարկաւագի, որ Բնագննութեան վերջն պարապ էջն վրայ զրած է հետեալ արձանագրութիւնը։

«Յիշտակ է այս թեհայզնորիւն կամ «մարդայիազմնորեան ջիրքս Թաղարգուցից «որ և յիմիշիկ անոն կոյի զարև Արեւ «յեաց Երանոսի որդի ասաց սարկայիտոց «մահանի Սիրուն Պապայի յիշտակ ի ով «որ որ այսաւ հանդիպի յիշեսկ, աստուած «իօր մեղք ոչ յիշեսկ։

«Ամի Տիհան 1800ին օգոստոս ամ. «սուն 19ին։

## ԾԲ.

### ԲՆԱՁՆՆՈՒԹԻՒՆ

247 թուահամարը կրող «Խմբացիրք»ին պարունակած տեսրերուն Գրդն է այս ձեռագիրը, որ քանի մը թերթէ միայն կը բաղկանայ և է ամենանոր ընդօրինակութիւն մը։

Ակիզբէն բաւական պակաս է և առաջն նիրթը զոր կը ներկայացնէ՝ ունի «Պատկերացուրիւն, որ և թենակնորիւն» վերնագիրը։

Նախորդ ձեռագրին գրեթէ յար և նման

է նիրթը. սա ալ՝ մազերու, դէմքի գիծերու ճանաչողութեանը և այլ ճեւերով մարդու բնաւորութեան ինչ տեսակ ըլլալը գուշակող գրուած մ'է. թերևս ալ անկէ քաղուած, բայց երկու թերթի մէջ միայն ամփոփուած։

Խետոյ կը սկսի «Յաղագս գաղտնեաց խոտից ումանց և ախտղոտվ ուրիշ զլուխ մը, որ արեածաղիկ, աղինձ, հեալումոր, վալիս (մարմիրան), չուշան մերձան, խոտերուն և բոյսերուն յատկութիւնները կը ներկայացնէ, և ասոր հետ ալ կարգ մը կենդանիներու, որոնց են Ծիծենակ, Ցաւորակ, Եռխապի յեզու, Գայլոյ բար, իշոյ բոք, իջու հոպու բաշնոց, ստիճ գայլոյ, օչի շապիկ, կրեայի ոս, արջոյ աչ, խորդ։

\* \*

Այս բոլորի մասին բաւական երկարապատում տողեր գրելէ վերջ կը սկսի ուրիշ զլուխ մը, որուն վրայ գրուած է Հատոր 2, և ներցն ալ սա տողեր։

«Համատօս գրիուածու գարմանայի փոր «ձի հաստատեալ յաջողակ կամ դիպուա «ծովքի ի տրամադրութիւնս մարմնոյ, Բա «ժանակ յերկուս զիրս ։ Յատայնուն ըն «ձեսի գրծշական խորհրդոց յիշերորդուն «գիտրիրոց զանազան իրաց պատկանացեա «լոց հանդերձ կիրատորեամբ իշիք աս ի «պահանանել զանձին յատղորեամ ։ ի բայ «ածեալ Պարօն Ֆրանչիակուսն Դոմինի «կոսի Առվայ, որ և վերակացու զեղորեկից «ի յատաց Հիսանդանցն Սուոր Հոգույն «եկեղեցոց ի Հոտմին ։ Յամեմամբ ի նորոյ «ենյոյ Հեղինակի ։ ի վեճեսիք ի Ցպա «րանի Բասանի ձեռամբ Հսիմօնիինոյ, «Հրամանաւ մեծատրաց ։ Արդ երկու զիրքս «այնոյ Հեղինակի յիտարական գրոցն յա «տերան ի Հայու ի մետաստ պրակի պատ «ինալ, ի վեցն աս ատաշինն, և հինգն առ «Երիրորդ»։

Առյն գրուածէն յայտնի կ'ըլլայ, որ այս գործիս թարգմանիչն ալ հաւանարար եղած է Հոլով Ցոհաննէս վարդապետը կ.

Պղլսեցին. թէկ ոչ անուն, ոչ ալ թուա-  
կան կը պարունակէ այս Յիշատակա-  
բանը:

Դիրքախտաբար չատ պակասաւոր ընդօ-  
րինակոթիւն մըն է ձեռագիրս, որ վե-  
րոզրեալ տեղեկոթենէն յետոյ,

Յորդրակ ի բարցմանէն առ անձն վայե-  
րոց յերկուց կենաց ի փրկորին,  
վերնագրով ուստանաւոր մը մէջ կը բերէ  
սատէս.

Յամենայն յայս վախճանի անախտե-  
լովն և վախճանի.

Բամից է դէտ յայս Հայելի, որոց թէ  
գոն ակն հայելի:

Խւծեալ բնութիւն անդ նորոգի, թեթև  
յախտից նոյն նորոգի,

Ե՛կ խոհական դու աստ երկի՛ր, ա՛րկ  
զհաշիւ անձինդ յերկիր:

Նախ քո հոգուրդ յախտ ի փորձել, էն  
բժշկէ զքեզ ի փորձել,

Ապա զդարման մարմնոյդ օգտի, յայս-  
միկ մտի առ օր օգտի:

Սա է գործ ինչ յիշատակի, յոյս զթոյ  
թէ միշտ յիշատակի.

Իրբէ թէ ցոյց ինչ ի յարգի, շահիւցն  
զի յայտնի յարգի:

Ապաքէն մարդ ի պատկերի, տերու-  
նեան է որ պատկերի:

Աղկցէ ուրեմն ի մտի,  
կազմ կանխել առ երկմտի:

\*  
\*\*

Ապա կը սկսի զքել առողջապահական  
դասեր, որոնց ամէն մէկին հետ կայ ոստա-  
նաւոր զրուածներ, առողջ կեցութեան իրը  
սկզբունք, որոնց այսօր ալ կընան ծա-  
ռայել, եթէ ուշազրութեան առնուին: Ըստ  
այսմ՝ Յաղագս պաշտպանելոյ զիեան յա-  
տողարեան Պղակին սկիզբ և վերջը կը  
կարդանը.

1. Կ'անդրադանենց որ ստանաւորիս սկզբնատա-  
ռերը (տողերու առաջին և երրորդ անդամներու) կը  
կազմն. «Յարութեան է այս յիշատակ»:

ԴԱ. ԽՄԲ.

Նթէ ինորն զառողջութիւն,  
և զող կենաց յանդորրութիւն,  
Զծանր հոգս ի թէն հերքեա,  
և զայրանալդ տարագրեա:  
Ներեա գուղվ երկայնամիտ,  
արա զնաշդ ուրախամիտ.  
Այս ոչ լիցի քեզ վայրապար,  
զոր գրեցի առողջարար:  
Եւս յանելոյ քո ի ճաշոյդ,  
հրաժարեսջիր յօրեա ի քնոյդ,  
Մի՛ արգելոյր մեզ ի քեզ անդ,  
և մի՛ նշշեր զքո սրբանդ:

Թէ գիշեայն կամիս հանգչիւ,  
Պարտիս փոքրու ինչ կերակրիւ:

Դիր որկորոյդ գու զահման,  
լիցի է ասն յորդ ի սահման.  
Թէ ողջ զուոյդ կաս որոնօզ,  
աջ փարայէ կենաց մանօզ.  
Յորժամ թժիշկօ քեզ պակասին,  
զերիսն զայս զբան նորին,  
Ուրախութիւնդ մտաց քոց...  
բարւոք հանգիստ և կարճ ճաշոց.

Որ մերթ ունի զանգստութիւն,  
նա է կայուն և հաստատուն.  
Քանզի այս զարս նորոգէ,  
և զթոյլ անգամ կազդուրէ:

Յաղագս կացուորելոյ զիւելապատակն  
պրակին սկիզբը կ'ըսէ.

Ի լուսանալըն կանխագոյն,  
լուս զձուոս ի ցուրդ ջրոյն.  
Յայսմ վարի դուն ինչ մաքրիւ,  
արքեալ լիցիս յամայն օդիւ.  
Սփռեա զվարս քո սանտրիւ.  
և զատամունս շփեա շարիւ.  
Զնելապատակդ կազդուրէա,  
կազդուրէացին անդամը զոնեա.  
Հետ քո ճաշոյդ ջերմ լուացիւ,  
մի խայթեսցն գոյն ինչ ցրտիւ,  
Գրեա ի խելս քո զայս զիր,  
լեր ողջութեան կանոնադիր:

Յաղագս զուարձուրեան և առադրուրեան  
պրակը կը պատուիրէ'

Աղբիւր գալարի նաև հայելի,  
սոքա տան զմաց գոյն կազդուրելի,  
ի ծանրագոյն և ճոխ ճաշոյ,  
Ենթակայի ստամբուն պատժոյ:

Զոր թէ տայցի ձեռն ազահ:  
Ով ոք սովոր է յիր ինչ  
Կրէ զկիր և ոչինչ:

Յաղագս պատրաստորեան, յառաջ քան  
գմաշ առնելոյ պրակին սկիզբը կը դնէ.

Գինիին յատկութիւններուն համար կը  
տողէ.

Մինչ տակաւին քաղցեալ կացցես,  
Քո զստամբուս նորոգեսիս,  
Դատարկացեալ և սրբեցեալ,  
Նախ քան զմաշ ի քեզ առեալ,  
Ծայնժամ ախորժն այն կարսոցէ  
Ստուգաչս ճաշ զզայցէ,  
Այս նշանակ քեզ եղիցի.  
Ճաշկի բիրանդ համեզեսցի:

Գինեաց բարեաց եթէ իղձ է,  
Նոցին զովեստն այս հինգ է.  
Զօրեղութիւն, զեղցկութիւն,  
Անուշ՝ և թարմ՝ և ցրտութիւն.  
Ուր և փորձին հոսով համով,  
Պայշտութեամբ այլ և գունով:

Յաղագս դեղորէից մահաբեր քիւնից  
պրակին ունի հետևեալ ստանաւորը.

Իսկ Մերամաղձային խորշելի կերակրոց  
Գլուխին համար կը առղէ.

Նում ի բերան խսոր այգուց  
Դնել և զարման է վասուց,  
Ցորմէ աղբումն անփորձ ջրոց,  
Եւ փոփոխումն պէսպէս ուոց  
Ո՛չ վասէ և ոչ ումեթ,  
Թէ ոք զոցի ուրեք ուրեք:

\* \*

Այս լուսաւորներին մէկ քանին հրա-  
տարակուած են այլեւայլ զիրքերու մէջ,  
բայց զժրախտարար՝ հոս կիսատ թողուած  
է և կիսատութեամբը վերջացած է ձե-  
ռազիրս:

Տօք. Վարար Յ. Թուրումյան  
(Շարունակելի)

Այլեւայլ պրակիներու մէջ ալ կը զրէ  
հետևեալները.

Պանիրն ասի առողջապահ,

